ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Հո-եկան(1) սաստիկ խ-ովքի(2) պահերին Սմբատը որև-(3) կերպ սիրտը թեթևացնելու պահանջ էր զգում: Մինչ այժմ նա, ա-փոփված(4) ինքն իր մեջ, ապրել էր հեռվում: Այս նոր միջավայրում ոչ ոք չէր ներում նրա անուղղելի սխալը: Մոր ու քրոջ՝ հարսին վար-աբեկող(5) բողոքները գ-գռում(6) էին այն զգացումները, որոնք Սմբատը թմրեցրել էր ի-ը(7) տարի շարունակ: Չուներ ուղղամիտ ընկեր, և դա ստիպում էր հուսախա-(8) փախչել մարդկանցից՝ որոնելով մի անդո-ավետ(9) անկյուն:

1) 2-ռ, 4-մ, 7-նն, 8-բ
2) 1-գ, 3-է, 5-կ, 9-ղղ
3) 1-գ, 6-ր, 7-նն, 9-ղղ
4) 2-ռ, 5-կ, 6-ր, 8-փ

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում գծիկով:**

1) աչքով(ունքով), անցած(գնացած), հույս(ապավեն), ալ(կարմիր)
2) այստեղ(այնտեղ), դեմ(հանդիման), փոքր(ինչ), ամառ(ձմեռ)
3) բառ(մասնիկ), օրոր(շորոր), արյուն(քրտինք), չորս(հինգերորդ)
4) գոռում(գոչյուն), ցուցահանդես(վաճառք), դեփ(դեղին), ռուս(հայկական)

3 **Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1) ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ, ՊԱՐՍԻՑ ԾՈՑ, ԱՇՈՏ ԵՐԿԱԹ
2) ՓՈՔՐ ԱՍԻԱ, ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, ՏԻԳՐԱՆ ՍԵԾ
3) ՏԵՐ ԹԱԴԵՎՈՍ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱՎՐՈՍ
4) ՆԵՐՔԻՆ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ, ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ, ՏՈՐՔ ԱՆԳԵՂ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա:**

1) փոխատվություն, անընդհատ, թրթուր, հետաքննիչ
2) թռչնորս, խնձորուտ, նստակյաց, դյուրընթեռնելի
3) սղոցաձուկ, տնտեսվար, մեղրամոմ, պտտահողմ
4) սկզբնապատճառ, ատենադպիր, միակտուր, առտնին

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:**

1) երգչախումբ, լճացում, ձնծաղիկ, երանգապնակ
2) այգեպան, ոոպեական, ընչաքաղց, դստրիկ
3) կթվոր, տնական, սնամեջ, վճարունակ
4) ձեղնահարկ, արնագույն, ձվաձև, վշտաբեկ

6 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) արյունահեղություն, սպանդ, նախճիր, եղեռն
2) զարհուրել, սոսկալ, սարսափել, ահաբեկվել
3) շավիղ, կածան, արահետ, բացատ
4) անհաստատ, խախուտ, անկայուն, հեղհեղուկ

7 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) թեժ-մարմանդ, փոքրոգի-վեհանձն, կանխիկ-անառիկ
2) պարսավել-դրվատել, հանդուգն-վեհերոտ, համեստ-անպատկառ
3) չոր-տամուկ, զտարյուն-անխառն, մշակովի-խոպան
4) գաճաճ-ածդահա, առինքնել-վանել, բանադրել-անիծել

8 **Ո՞ր տարբերակում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

1) **աչքի չափով**-մոտավորապես, **գլուխ տանել**- ձանձրացնելով տհաճություն պատճառել
2) **քթի տակ**-շատ մոտիկ, **տաշած քարը գետնին չի մնա**-արժեքավոր մարդը, գործը կգնահատվեն
3) **թղթին հանձնել**-գրի առնել, **ճամփին քար գցել**-անելիքները չկատարել, անուշադրության մատնել
4) **սուր ճոճել**-սպառնալ, **խոսքը երկու չանել**-ասածը անմիջապես կատարել

9 **Փակագծերում տրված բառերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:**

ա. Մինչև այժմ էլ չեմ կարողանում (1. ըմբռնել, 2. ընկրկել) մորս սիրո խորությունը:
բ. Նրա գերեվարության ու կուրացման մասին վկայությունները մեծ մասամբ վիպական-ստեղծական են և չեն կարող (1. հիրավի, 2. հավաստի) ու պատմական լինել:
գ. Սաստիկ այրող (1. խոյակ, 2. խորշակ) է փչում. կխփի, կխարկի արտ ու արոտ:
դ. Խավոտ վարագույրները զով էին պահում սենյակները, երկու (1. պնակ, 2. ըմպանակ) սուրճը հանգչում էր փոքրիկ սեղանին:

1) ա-2, բ-1, գ-2, դ-2
2) ա-2, բ-2, գ-1, դ-1
3) ա-1, բ-1, գ-2, դ-1
4) ա-1, բ-2, գ-2, դ-2

10 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:**

1) ցորեն, կարևոր, ամբրոս, հյուլե
2) նամակ, մահիճ, կնգուղ, գողոն
3) ժողով, ժպիրհ, շարան, դժնի
4) նաժիշտ, գուշակ, ողկույզ, հերոս

11 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:**

1) կողմնացույց, որդեգիր, կաթնասուն, մեներգ
2) նավավար, հետախույզ, անցաթուղթ, առակագիր
3) օրապահ, սրունք, գրաբեր, հարթաչափ
4) հանքափոր, պատճեն, արքայադուստր, դասալիք

12 **Ո՞ր շարքում ածական *չկա:***

1) հպարտորեն, հիմնովին, ոստրե
2) անշուշտ, թանկարժեք, հեծելազոր
3) բազմիցս, բրոնզաձույլ, խորտիկ
4) նույնպիսի, ժպտուն, առանձնապես

13 **Ընդգծված դերբայական ձևերից ո՞րն է ճիշտ:**

1) Այդ շաղակրատը ամեն տեղ էլ **խոսած** կլինի մեր մասին:
2) Ջրից **փախնողը** հայտնվեց կրակի մեջ:
3) Ամեն քայլափոխի հանդիպում էին հաց **մուրող** մարդիկ:
4) Տնային ծաղիկներ **աճացնելը** այնքան էլ հեշտ գործ չէ:

14 **Ո՞ր տարբերակում հարաբերական դերանուն *չկա:***

1) Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր Ուղիների ժապավեններն անհամար:
2) Այս իմ հրաշք աշխարհն է, ուր Գլխիվայր են ծառերն աճում:
3) Էլ չեմ հավատում այդ ջինջ աչքերին Եվ խորունկ ձայնիդ նվագին քնքուշ, Որ հնչում էր միշտ այնքան մտերիմ:
4) Երնե՜կ նրան, ով իր գործով Կապրի անվերջ, անդադար:

15 **Ո՞ր նախադասության մեջ *ա* խոնարհման բայ կա:**

1) Ուռենու տակ տխուր նստել էր Լիլիթը՝ ճակատը բազուկներին հենած:
2) Ջուրը ծառերի տակ կապելուց հետո Լառ-Մարգարը պառկում էր շվաքի տակ և աչքերը կիսախուփ անում:
3) Մարդս խանձարուրից մինչև գերեզման անպարտելի հույսերով ձգտում է երջանկության՝ առանց ըմբռնելու՝ ինչ է այն:
4) Կինը նստել էր օջախի առաջ, հաճախ բարձրացնում էր թեյամանի կափարիչը և նայում տաքացող ջրին:

16 **Ո՞րը միակազմ նախադասություն *չէ:***

1) Ընջել ավելորդ բառերը, նկատել էականը, անհրաժեշտը, հոգին:
2) Առանց լեզվի ազգ չկա:
3) Իրար գլխի նստած սարեր, Ձորեր՝ քնած իրար ծոցում:
4) Ըստ ասացվածքի՝ ծաղկած ծառին քար չեն նետի:

17 **Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**



1) Լինելով մարմնեղ և գունատ՝ նա ինձ երբեք դուր չէր եկել և չէր գրավել, քանի որ նրա մեջ աստիճանաբար հայտնաբերում էի այնպիսի գծեր, որոնք ինձ տհաճ էին:
2) Քանի որ նրա շուրջը ամեն ինչ գեղեցիկ էր, ամեն ոք ձգտում էր հաճոյանալ նրան՝ վերջինիս դուր գալու նպատակով, որպեսզի ինքն էլ ուրախ և երջանիկ զգար, ինչպես հրեշտակներն են անհոգ ու երջանիկ:
3) Մինչ նա խոսում էր, ես նայում էի տիկնոջը և սպասում, որ նա բերի այնպիսի հիմնավորումներ, որ ես փարատեմ իմ կասկածները:
4) Հենց որ նստեց նստարանին, սկսեց խոսել Փարիզի մասին, բայց չէր զգում ու նկատում իմ զայրույթը, որ առաջացավ այն պահին, երբ նա սկսեց խոսել:

18 **Ո՞ր նախադասության մեջ դերբայով արտահայտված ենթակա կա:**

1) Մի քանի օրով հետաձգել էր գրելը:
2) Գնաց այգի՝ խնամելու ծառերը, ջրելու նոր բողբոջողները:
3) Գնահատում էին միայն իրենց աչքով տեսածը:
4) Նվագողը մի պատանի էր, որ գերել էր բոլորին:

19 **Ո՞ր նախադասության մեջ հանգման անուղղակի խնդիր կա:**

1) Մերոնց վիշտն անթեղած կրակ էր, որ մերթ բոցավառվում էր որպես պայծառ հույս, մերթ դառնում մարմրին տվող տկար կայծ:
2) Դու այնպես ես խոսում, կարծես այն ամենից, ինչ ներկայացրեց բանախոսը, քեզ ոչինչ չի հետաքրքրում:
3) Այդ իրիկուն տատս ջոկեց պանրի յուղոտ կտորները, և մենք հասկացանք, որ նա քաղաք է տանելու նաև պոչը ծաղիկ երինջին:
4) Նրանք երկուսով անիծում էին մեզ, պատմում մեր չարաճճի արարքների մասին:

20 **Ո՞ր նախադասության մեջ պարագա *չկա:***

1) Փոքրահասակներից մի քանիսը գոգնոցով իրենց դեմքերը ծածկեցին և պահվեցին ինձանից:
2) Հուշերիս մեջ նայում ինձ դարձյալ, Ժպտում են աչքերը քո ջինջ:
3) Ավա՜ղ, ինչո՞ւ նույնն է նաև Մեզ բաժանող ամբարտակը:
4) Եվ ծլվլաց աշխարհով մեկ Լույսը առավոտի:

21 **Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Ամեն օր եկեղեցի էին գնում թե ամուսինը և թե կինը իրենց հետ տանելով նաև մանկահասակ դստերը:
2) Ոչ ոքի համար գաղտնիք չէր որտեղ էր թաքնվել այդ մարդը կամ ինչ նպատակներ էր հետապնդում:
3) Իմ անմոռաց Սոնա տատ քո իմաստուն խորհուրդները ես միշտ եմ հիշում:
4) Նա և ընկերը ամբողջ օրը թափառելուց հետո ի վերջո վերադարձան իրենց տները:

22 **Ո՞ր նախադասությունն է գրաբարով:**

1) Երբ կու ծաղկին միտքս ու հոգիս, լեզուս իմ հանց պըտուղ կու տայ:
2) Եթե հույս ունինք ապագայի վերա, նորա երևեցուցիչը դուք եք, ձեզանից կախվում է ազգի ապագան, և ձեր վերա է միակ հույսը:
3) Ու գեթ ցոլք մը տայի ոսկի իմ հուրես Մութ հոգիի ճըրագներուն ցրտահար:
4) Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելանէր, Ընդ եղեգան փող բո՛ց ելանէր, Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ:

23 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

……, որն ակնթարթորեն շողարձակում է իր հրեղեն լույսով և ակնթարթորեն էլ անհետանում:

1) Առանց աշխատանքի մարդու տաղանդը նման է հրավառության
2) Առանց աշխատանքի հրավառության է նման տաղանդը մի մարդու
3) Հրավառության նման է մարդու տաղանդը՝ առանց աշխատանքի
4) Առանց աշխատանքի հրավառության է նման այն մարդու տաղանդը

24 **Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Մինչև պարանոցը ջրի մեջ կանգնած է Տանտալոսը, իսկ գլխավերևում հասուն մրգերով ծանրաբեռնված ծառի ճյուղեր են:
2. Բայց մի օր նա կասկածեց աստվածներին և ցանկացավ ստուգել նրանց ամենազոր լինելը, որի համար խիստ պատժվեց: Նրան գցեցին ստորերկրյա խավար աշխարհը, որտեղ նա տանջվում է քաղցից ու ծարավից:
3. Տանտալոսը, ըստ հունական դիցաբանության, Փռյուգիայի թագավորն էր, որ վայելում էր Զևսի և բոլոր աստվածների սերն ու համակրանքը:
4. Երբ ձգվում է՝ միրգը պոկելու, ճյուղերը վեր են բարձրանում, իսկ երբ կռանում է՝ ջուր խմելու, ջրերը ցած են իջնում: Այսպես նա դատապարտված է հավիտենական տանջանքի:

1) 3, 1, 2, 4
2) 1, 4, 2, 3
3) 1, 3, 4, 2
4) 3, 2, 1, 4

25 **Ըստ «Սասնա ծռեր» էպոսի համահավաք բնագրի՝ ի՞նչ պայման են կապում Մեծ Մհերը և Մլսրա Մելիքը:**

1) Ով կարողանա հաղթել Սպիտակ Դևին, մյուսը նրան հարկ վճարի:
2) Միավորվեն և նվաճեն հարևան երկրները:
3) Ով հաղթի մենամարտում, նա դառնա և՛ Սասունի, և՛ Մլսրա թագավոր:
4) Ով շուտ մեռնի, նրա ընտանիքին տիրություն անի մյուսը:

26 **Ա. Շիրվանզադեի «Քառս» վեպի հերուսուհի Անտոնինա Իվանովնայի վերաբերյալ պնդումներից ո՞րն է ճիշտ:**

1) Սովորում է հայոց լեզու, և ինքն ու Շուշանիկը նվիրվում են մարդկանց լուսավորելու գործին:
2) Մոռանում է ուսանողական տարիներին դավանած իր սկզբունքները և հափշտակվում միլիոններով, ինչպես Սմբատը:
3) Բաժանվում է Սմբատից և եղբոր հետ մեկնում Մոսկվա:
4) Հաշտվում է Սմբատի հետ և նրա ու Ոսկեհատի հետ ապրում է հանքերում:

27 **Ո՞ր հատվածը Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմից *չէ:***

1) Աշխարհքում հաստատ չկա ոչ մի բան,
   Ու մի՛ հավատալ երբեք ոչ մեկին.
   Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ հաղթության,
   Ոչ սիրած կնկա տված բաժակին:
2) Խարխուլ մակույկով հանձնվիր ծովին, քան թե հավատա կնոջ երդումին.
   Նա՝ կավատ, վարար, մի չքնաղ դժոխք, նրա բերանով Իբլիսն է խոսում:
3) Ու կռվի դաշտում շահի առաջին
   Արին մի անգամ գովքը սիրունի.
   Նրան՝ իր տեսքով, հասակով, ասին,
   Չի հասնի չքնաղ հուրին Իրանի:
4) Պտույտ է գալի ծաղիկ տիրուհին,
   Անցնում է, հսկում սեղաններն ամեն,
   Հորդորում, խնդրում, որ ուրախ լինին,
   Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:

28 **Ո՞ր բառն է բաց թողած:**

.....սերունդների
Աչքն է դիպել լույս գագաթին
Ու անցել:

1) Մահախուճապ
2) Աստանդական
3) Եղեռնապուրծ
4) Խուճապահար

29 **Գ. Զոհրապի ո՞ր հերոսուհին է նորավեպի ավարտին դառնում *«…սևեր հագնող աղջիկ մը, որ չամուսնանար»:***

1) Պերճուհին
2) Զարդարը
3) Վասիլիկը
4) Տիգրանուհին

30 **Տրված հատվածներից ո՞րն է Վ. Տերյանի «Fatum» բանաստեղծությունից:**

1) Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն,
   Օղակելով լույս աստղերը մեկմեկու:
2) Այնպես գգվող է երեկոն անափ,
   Ծաղիկներն այնպես նազով են փակվում:
3) Անունդ թող փարոս լինի ինձ
   Սուտ կյանքի և դառը մահու դեմ:
4) Թող կիտվի խավարն ավելի խրթին,
   Եվ չարխինդ ճնշե հողն իմ արյունոտ:

31 **Տրվածը Լ. Շանթի «Հին աստվածներ» դրամայի ո՞ր հերոսի մասին է:**

Մանկուց նա մեծացել է վանքում վանահոր հովանավորության ներքո: Վանահայրը նրա հետ է կապել իր հույսերը, սակայն նրան վիճակվում է առնչվել աշխարհիկ կյանքին:

1) Ատոմ վանականի
2) Աբեղայի
3) կույր վանականի
4) Ճերմակավորի

32 **Ե. Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

…Եվ հավատացինք, հարբած ու գինով,
Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ուժի –
Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով
Մեր երկիրը հին դարձրին փոշի…

1) «Դանթեական առասպել»
2) «Անվերնագիր»
3) «Մահվան տեսիլ»
4) «Վահագն»

33 **Ո՞ր բառերի կամ բառաձևերի վերջին վանկը *չի* շեշտվում:**

1. միթե, 2. գիսաստղ, 3. քարշ տալ, 4. ծանրամարտ, 5. գրել եմ, 6. իհարկե, 7. քաղաքի, 8. դառը

34 **Ո՞ր բառերն են ճիշտ բացատրված:**

1. **ոստայն**-սարդի հյուսած ցանց, 2. **ակութ**-թղթերի կապոց, 3. **պատրանք**-ստեղծագործական ներշնչանք, 4. **բրուտ**-կավագործ վարպետ, 5. **ջնարակ**-խեցեգործական առարկաների ապակեներկ, 6. **վարկած**-գիտական ենթադրություն

35 **Որո՞նք են պարզ ժամանակաձևեր:**

1. չեմ գնա, 2. վեր կենայի, 3. պիտի գոչեմ, 4. մի՛ թող, 5. եկել եմ, 6. չի կորել, 7. նե՛րս եկ, 8. պետք է գնամ

36 **Ո՞ր նախադասություններում գոյականի ուղղական հոլովով արտահայտված որոշիչ կա:**

1. Կախարդ լուսնի հրապուրող շողի պես Դու ժպտացիր գուրգուրանքով սեթևեթ:
2. Իրիկնանում է. քաղաքում կամաց-կամաց զարթնում է երեկոյան աղմուկը:
3. Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց, Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին:
4. Աստղերն են ժպտում լուսեղեն նազով, Խաղաղ դաշտերը մութն է համբուրում:
5. Գոհար աստղերի քարավանները թափառում էին երկնի ճամփեքով:

37 **Ո՞ր նախադասություններում համաձայնության սխալ կա:**

1. Անըմբռնելի է տիեզերքը. անհամար աստղեր ու արև ծնվում ու մեռնում է, ինչպես վայրկենական երևույթներ հավերժության մեջ:
2. Հիմա միայն Պարրոտը հասկացավ, որ Արարատը հայության հավատքի անխախտ սյունն է և սրբություններից ամենանվիրականը, որին երբեք չի կարելի դավաճանել:
3. Անձրևը, խոնավությունը կաթում է մամուռների վրա, ծառերի վրա և քարափների լանջին:
4. Այդ գիտարշավն ու վերելքը մեր գիտության և մշակույթի համար բախտորոշ նշանակություն ունեցան, և դրանցով սկիզբ դրվեց Արևելյան Հայաստանի բնական հարստությունների հետազոտությանը:
5. Այդ վերելքներից ստացած անջնջելի տպավորություններից ու խանդավառ ոգևորություններից ծնունդ առան Աբովյանի բանաստեղծական տաղանդի փայլատակումներից մի քանիսը:

38 **Ո՞ր նախադասություններում միջակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Նրա առաջ ծառացել էին լուրջ խնդիրներ պետք է բնակարան գտներ նաև աշխատանքի մասին պիտի հոգար:
2. Ծաղրածուի խոսքերը վաթսունամյա Լիր արքայի սրտում կասկած են ծնում միթե կրտսեր դուստրն էլ նման է մյուսներին:
3. Երկար ուղևորության ընթացքում այդ ուղևորությունը նրան պարտադրված էր վերևից փորձում էր հասկանալ ինչ նպատակով են իրեն հեռու պահում հաշվեմատյաններից:
4. Նոյյան հանգրվանը Մասիսը շատ չոր է ու լերկ ոչ ծառ կգտնես նրա լանջին ոչ թուփ:
5. Սամվելի հայրն ուներ մի նպատակ որդուն դարձնել հայոց այրուձիի հրամանատար:

39 **Բառերից քանիսո՞ւմ ածանցի հնչյունափոխություն կա:**

բնութագրական, միջնորմ, սառցապատ, բուժօգնություն, պատմական, մատնաչափ, թռչնաբուծարան, ծաղկաբույլ, հանդիպակաց

40 **Տրված բառերից քանի՞սն են կազմությամբ բարդ:**

շաքարեղեգն, շքադուռ, հանքատեր, ձկնկիթ, վերնաշերտ, վերջաբան, սրտատրոփ, խորաքնին

41 **Նախադասություններից քանիսո՞ւմ միայն մեկ մակբայ կա:**

- Կանչում է կրկին, կանչում անդադար Էն չքնաղ երկրի կարոտը անքուն:
- Ու թևերն ահա փռած տիրաբար՝ Թռչում է հոգիս, թռչում դեպի տուն:
- Ուր որ հայրենի օջախի առաջ Վաղո՜ւց կարոտով սպասում են ինձ:
- Մենք դիտմամբ փորձում էինք ջղայնացնել նրանց, սակայն չէր հաջողվում:
- Երազ աշխարհում Ամեն բան հավետ Գալիս է, գնում Ու ցնդում անհետ:

42 **Նախադասություններից քանիսո՞ւմ բազմապատկական բայ կա:**

- Լեռնային անընդհատ շղթաներն իրենց բազմաթիվ ճյուղավորություններով կտրատել էին երկրի մակերևույթը:
- Երկար փնտրտելուց հետո նրանք վերջապես գտան կորած հարազատներին:
- Ձայրույթից այլայլված դեմքին աչքերը վառվում էին դանակի շեղբի նման:
- Աղջիկների խմբի մեջ նորից տեսա Խոնարհին և շտապ տուն մտա, որովհետև մյուս աղջիկները սկսեցին քչփչալ:
- Լուսադեմին հողմը կայմից կտրեց մի քանի պարան և պատռեց չորրորդ առագաստը:

43 **Նախադասություններից քանիսո՞ւմ է ընդգծված անդամի պաշտոնը ճիշտ նշված:**

- Եվ արդեն սովորական **<u>քան</u>** էր հայկական փոքրիկ քաղաքներում այդ երևույթը: *(ստորոգելի)*
- Արտեմիսի հանրահայտ տաճարի կառուցումը տևել է **<u>հարյուր քսան</u>** տարի: *(չափի պարագա)*
- Անգրագետների նամակ գրողն էր ու նամակները **<u>կարդացողը</u>**: *(ենթակա)*
- Իր այդ **<u>արարքի համար</u>** հայրը մի քանի ամիս բանտ նստեց: *(նպատակի պարագա)*
- Նրան զարմացրեց **<u>այն</u>**, որ այդ ամբողջ հասարակությունը միաբան էր: *(ուղիղ խնդիր)*

44 **Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածված.**

հանգավորում, համեմատություն, շրջադասություն, բաղաձայնույթ, չափազանցություն:

Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պես,
Կյանքը դարձավ անմխիթար զառանցանք.
- Մենք կժպտանք, գոհ կժպտանք մեռնելիս,
Որ երազում երազեցինք ու անցանք…

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. ***Յու*** երկհնչյունը հնչյունափոխվելիս և՛ կարող է դառնալ գաղտնավանկի ***ը***, և՛ կարող է սղվել:
2. ***Յա*** երկհնչյունը հնչյունափոխվելիս դառնում է ***ե:***
3. Բառավերջի բաց վանկի ***ու***-ն ձայնավորից առաջ միշտ հնչյունափոխվում է ***վ***-ի:
4. ***Ի*** ձայնավորը հնչյունափոխվելիս կարող է վերածվել բաղաձայնի:
5. Բառասկզբի ***է*** ձայնավորը հնչյունափոխվելիս դառնում է ***յ:***
6. ***Ույ*** երկհնչյունը չի կարող հնչյունափոխվել ***ը***-ի:

Բ մակարդակ

46 **Ո՞ր շարքում ուղղագրական սխալ *չկա:***

1) դշխեմ, դողէրոցք, տարերք, ընչացք
2) երփներանգ, լվածք, անհեթեթ, անհարկի
3) արհավիրք, անբասիր, ճմրթված, կխտար
4) բարվոքել, սուսամբար, հեղեղատ, սիբեխ

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է ընդգծված *ե*-ն արտասանվում *է*:**

1) երթևեկ, ինքնաեռ
2) ակներև, ռնգեղջյուր
3) գետեզր, կիսաեփ
4) արևելք, զորաերթ

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերում աղում կա:**

1) աշնանացան, ձեղնահարկ, աստղաբույլ, բուրավետ
2) կանխակալ, բարենպաստ, դյուցազներգություն, վրեժխնդրություն
3) ոճրագործ, ճանճրույթ, երկրաչափական, գործնական
4) դեղնակտուց, ակնոցավոր, մարդկային, կցակառույց

49 **Ո՞ր շարքի բոլոր բառերում կա *հուր* արմատը:**

1) հրանոթ, հրածին, հրեղեն
2) քամահրել, հրկիզել, հրթիռ
3) հրոտ, հրակայուն, հրամանատար
4) հուրհեր, հրացան, հրաժարվել

50 **Ո՞ր շարքի բառերից *ոչ մեկի* արմատին (արմատներից մեկին) *չի* կարող միանալ տրված վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:**

1) ***-ոն*** -պարագլուխ, ծամկալ, թևաթափ
2) ***-որդ*** -քսաներկու, միջնապատ, բնութագիր
3) ***-ային*** -առաջնեկ, խորհրդակցել, մեղմահնչյուն
4) ***-մունք*** -փետրվար, անբաժանելի, ուսանող

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերում *ան-* նախածանց կա:**

1) անապական, անարգաբար, անագագործ, անգիտակ
2) անիրավ, անաղարտ, անանձնական, անդրադարձ
3) անգայթ, անստույգ, անվանակից, անդեմ
4) անպատեհ, անասնակեր, անգութ, անզուգական

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:**

1) ամենատես, հեռանկար, լայնեզր, լեռնաշղթա
2) ծովածոց, մշտադալար, դափնետերև, տարեվերջ
3) մեծամիտ, մարդամոտ, հանրաքվե, ծովառյուծ
4) բարյացակամ, գեղագետ, բարենպաստ, սարեսար

53 **Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ *չկա:***

1) Բայց աչքերը մեր արևներ չտեսան, Եվ մեր սրտերը՝ լուսավոր հեռուներ:
2) Աչքս դիպավ աչքի բոցին, Ու գլուխս կախեցի:
3) Էլի գարուն կգա, կբացվի վարդը:
4) Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես՝ մնաս բարով:

54 **Ո՞ր տարբերակում նախադասության անդամի ձևաբանական վերլուծության սխալ *չկա:***

Հենց արեգակի առաջին ոսկեզօծ շողերն ընկնում են գիշերվա՝ մարմինդ սարսռեցնող ցրտից սառած ժայռերին, քարակաքավը ինչ-որ որձաքարի բեկորի վրայից սկսում է անընդմեջ երգել:

1) **մարմինդ -** ստացական հոդով գոյական, **ընկնում են**-սոսկածանցավոր բայ
2) **սարսռեցնող**-պատճառական բայ, **երգել**-վաղակատար ձևաբայ
3) **վրայից**-հետադիր կապ, **հենց**-սաստկական վերաբերական
4) **ինչ-որ**-անորոշ դերանուն, **սառած**-պարզ բայ

55 **Ո՞ր շարքում են բոլորը հարակատար դերբայներ:**

1) մոտեցրած, հասարակած
2) ընդունած, հակահարված
3) ամոթխած, մոռացած
4) տպագրված, եկած

56 **Ո՞ր նախադասության մեջ ենթադրական եղանակի բայաձև կա:**

1) Ինչե՞ր կային քո խանդավառ սրտում. Տիեզերական երազներ կային:
2) Երբ որ կամենաք, գնացեք-եկե՛ք, Հյո՛ւր եղեք նրանց Աղոթարանում:
3) Եթե ծնվեր երգը նրա Եվ կլկլար կոկորդն ի վեր, Ես տենչայի պիտի արդեն՝ Ինձ այրեին ու կոփեին:
4) Նրան չենք կարող ու չենք մոռանա, Միայն թե թող նա թողնի, հեռանա:

57 **Ո՞ր տարբերակում ներգործական սեռի բայ *չկա:***

1) Մշուշների շղարշի տակ
Աշնան խաշամն է խշխշում,
Քամու ձեռքերն անհամարձակ
Ամպի փեշերն են քաշքշում:
2) Ոտքիս տակ մի մեծ սար է սարսռում,
Եվ գլխիս վերև երկինք է մի մեծ,
Տիեզերքն իմ մեջ իրեն է փնտրում,
Եվ զրնգում է տիեզերքն իմ մեջ:
3) Խառնվեցին ծալքերն արտ ու թամբի,
Ու մոտեցան քիչ-քիչ լեռներն իրար:
4) Կիսարթուն քամին կտուրից թռչում,
Ցանկապատին էր հենում կռնակը:

58 **Ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա:**

1) Այլ է կարոտս հիմա:
2) Անտոնը գրագրին պատվիրեց ոչ ոքի չհայտնել գրության մասին մինչև իր վերադարձը:
3) Սովորության համաձայն՝ բոլորն էլ, իրենց մանուկներին գրկած, գնում էին հորս ձեռքը համբուրելու:
4) Ահա լեռները, որոնց լանջերին բանջար էինք քաղում, երբ ընկերներիս հետ հովիվ էի:

59 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված տրված նախադասությունների ստորադաս բաղադրիչների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):**

1. Այն լուրերը, թե ծովանկարիչը ստեղծել է արտասովոր մի նկար, արագորեն հասան Պետերբուրգ:
2. Վախենում էր արքային տեղեկացնել, որ ազդեցիկ մի քանի նախարարներ, ծեծելով հարկահաններին, հրաժարվել էին արքունի տուրքերը վճարելուց:
3. Նրանք դեռ կիրճը չէին անցել, երբ թիկունքից աղաղակներ լսվեցին:
4. Թվաց, թե այդ ամենը չի եղել, ու ես մղձավանջային երազի մեջ եմ:

ա. ենթակա
բ. ուղիղ խնդիր
գ. վերաբերության խնդիր
դ. ժամանակի պարագա
ե. որոշիչ

1) 1-ե, 2-բ, 3-դ, 4-ա
2) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ
3) 1-ե, 2-ա, 3-դ, 4-բ
4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ

60 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

1) *Ու մնում է մի դատարկ տարածություն, որ ավելի է բարձրացնում կամրջի հմայքը քաղաքացիների աչքում:*
   Ու մնում է քաղաքացիների աչքում կամրջի հմայքը ավելի բարձրացնող մի դատարկ տարածություն:
2) *Նոր հետախույզներ ուղարկելու մասին հանձնարարությունը տալու պահին տեսավ, որ մութի մեջ մեկը շտապում է դեպի ինքը:*
   Նոր հետախույզներ ուղարկելու մասին հանձնարարությունը տալու պահին տեսավ մութի մեջ դեպի ինքը շտապող մեկին:
3) *Երբ ձյան շերտով պատած կատարները ոսկեորվեցին արևի առաջին շողերով, արշավախմբի փորձառու ղեկավարը շարժվելու հրահանգ տվեց:*
   Արևի առաջին շողերով ձյան շերտով պատած կատարները ոսկեորվելուն պես արշավախմբի փորձառու ղեկավարը շարժվելու հրահանգ տվեց:
4) *Ջալալօղլու դպրոցում Թումանյանը մի բանաստեղծություն է գրել, որը նվիրված է հույն քարհատ Սավային:*
   Ջալալօղլու դպրոցում Թումանյանը մի բանաստեղծություն է գրել՝ նվիրելով հույն քարհատ Սավային:

61 **Ո՞ր նախադասության մեջ է դերբայական դարձվածի պաշտոնը սխալ նշված:**

1) Պետք է խոստովանեմ, որ այն ժամանակ գրական մեծ համբավ նվաճելը ինձ թվում էր չափազանց հեշտ հաղթանակ: *(ենթակա)*
2) Իմ մեջ եռացող այս անսահման ինքնասիրությունը ինձ այդ պահին լիովին փրկեց: *(որոշիչ)*
3) Բայց նա այդքան շուտ հուսահատվողներից չէ. նրան ոչ մի բանով չես ընկճի: *(ստորոգելի)*
4) Ես որոշեցի անհապաղ վրեժ լուծել հասարակությունից: *(անջատման խնդիր)*

62 **Ո՞ր նախադասության մեջ մասնական բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Դպրոցում իբրև տնօրեն աշխատելու տարիներին նա մտերիմ էր մեր ընտանիքին:
2) Բագրատյանին իբրև բժշկի մտահոգում էր միայն մի հարց հիվանդների արագ առողջանալը:
3) Որպես լքված թավջութակի ճգված մի լար Դողում է սիրտս կարոտով մի ահարկու:
4) Որպես Լաերտի որդին որպես Ուլիս մի թողած և հող և տուն Անցա ծովեր ու ցամաքներ ես:

63 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ *չկա:***

1) Բացված ձեռագրի մի կեսը թվում է՝ կապույտ ստվերի մեջ էր, մյուսը՝ երկաթյա եռաժանի մոմակալի դեղնակարմիր կայծկլտուքների տակ, և նրա վրա նշմարվում էին նոտրագիր տողերը:
2) Նրանից քիչ հեռու՝ կաղնեփայտե սևացած գրակալի առջև, կապարե գրիչը ատամների մեջ սեղմելով, քսանամյա Աստվածատուրը թերթում էր բառարանը:
3) Մարդ պետք է վարժ լիներ նրանց՝ խորաթաքույց և խոսուն աչքերի շարժումներին, որ կարողանար նկատել, որ մեկը մյուսին հայտնում էր՝ ժամանակն է:
4) Ներքևում անդնդային խորություններն էին, որտեղից հազիվ լսելի էր լինում անցնող գետերի խուլ դղրդյունը, վերևում ուղղաձիգ ժայռեր, որ ամեն րոպե սպառնում էին խորտակվել՝ ամեն ինչ ծածկելով իրենց ահարկու փլատակների տակ:

64 **Ո՞ր տարբերակում փակագծերում տրված բառերի ձևափոխության սխալ *չկա:***

Հսկայական չափեր ուներ «Միրակուզի» ……. նավը, որը, ……. առևտրական նավ, ……. կարող էր վերածվել մարտականի, մանավանդ որ նրա տախտակամածին դրված էր Արքիմեդի ……. կառուցված հսկա բաբանը:

(անվանել, լինել, հեշտություն, նախագիծ)

1) անվանված, լինելով, հեշտությամբ, նախագծով
2) անվամբ, լինելով, հեշտորեն, նախագծով
3) անվանված, լինելով, հեշտորեն, նախագծով
4) անվամբ, եղել էր, հեշտությամբ, նախագծից

65 **Ինչի՞ նկարագրությամբ է սկսվում Ա. Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքը:**

1) Բասուտա գետի
2) ալպիական մանուշակների
3) Բակուր իշխանի դամբարանի
4) Կաքավաբերդի

66 **Հ. Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի հերոսուհի Աղունն ինչո՞ւ էր պատրաստվում քաղաք գնալ:**

1) կրտսեր որդուն՝ Սերոյին, քաղաք տանելու
2) գյուղից ու գյուղական աշխատանքից հանգստանալու
3) տղային՝ Արմենակին, ամուսնացնելու
4) Սիմոնի հետ կռված լինելու պատճառով

67 **Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Եղջերուները կենդանիների մի մեծ խումբ են: Այդ խմբի մեջ մտնում են և՛ հյուսիսային եղջերուն, և՛ Եվրոպայի անտառների բնակիչը՝ այծյամը, և՛ հեռավորարևելյան ու սիբիրական մարալները, և՛ հյուսիսարևելյան վիրջինյան եղջերուները, և՛ որմզդեղներն ու եղնիկները:

Ամենահետաքրքիրը թերևս հյուսիսային եղջերուներն են: Նրանք, ի տարբերություն այլ վայրերում տարածված հայտնի ընտանի կենդանիների, միակն են, որ հիանալի հարմարվել են դաժան պայմաններում ապրելուն: Օրինակ՝ ձմռանը ձյուների միջով քայլելը դժվար է. թաղվում ես ձյան մեջ, իսկ հյուսիսային եղջերուները չեն թաղվում, որովհետև նրանց լայն կճղակներն օգնում են ազատ տեղաշարժվելու թե՛ ձյան վրա, թե՛ ճահճուտներում: Հյուսիսային եղջերուների բուրդը ևս առանձնահատուկ է: Մազաթելի հաստ միջուկը լցված է օդով, իսկ օդը լավ է պահպանում մարմնի ջերմությունը: Այդ պատճառով էլ նույնիսկ ուժեղ քամու ժամանակ մորթին եղջերուին հուսալիորեն պաշտպանում է ցրտից: Բոլոր տեսակի եղջերուների միայն արուներն են, որ եղջյուրներ ունեն, մինչդեռ հյուսիսային եղջերուների թե՛ արուները, թե՛ էգերը եղջյուրներ ունեն:

Հյուսիսային ժողովուրդները վաղուց ի վեր ընտանի եղջերուներ են բուծում, և դրանք հյուսիսի բնակիչների համար փոխարինում են թե՛ ոչխարին, թե՛ կովին ու ձիուն:

1. Գոյություն ունեն աշխարհագրական տարբեր վայրերում բնակվող, միմյանցից արտաքին տեսքով տարբերվող, ինչպես նաև ընտանի և վայրի տեսակների եղջերուներ:
2. Բոլոր կենդանիներից ձյան վրա քայլել կարող են միայն հյուսիսային եղջերուները, որովհետև նրանց կճղակները ավելի լայն են մյուս բոլոր կենդանիների կճղակներից:
3. Բացի հյուսիսային եղջերուներից, այս խմբի կենդանիների միայն արուները եղջյուրներ ունեն:
4. Հյուսիսային եղջերուների մարմնի ջերմությունը պահպանվում է նրանց բրդի մազաթելի՝ օդով լցված հաստ միջուկ ունենալու առանձնահատկության շնորհիվ:
5. Թեև հյուսիսային ժողովուրդները, բացի եղջերուներից, հավասարապես բուծում են թե՛ ոչխար, թե՛ կով, թե՛ ձի, սակայն որոշ առումներով ընտանի եղջերուները նրանց համար անփոխարինելի են:

68 **Ո՞ր շարքերում տրված խոսքի մասին *չպատկանող* բառ կա:**

1. ամբողջ, ամենուր, մի քանի, սույն *(դերանուն)*
2. վերաբերմամբ, առընթեր, փոխանակ, օրոք *(կապ)*
3. միմիայն, մասամբ, բարեբախտաբար, իրավամբ *(վերաբերական)*
4. երրորդ, երիցս, միլիարդ, տասական *(թվական)*
5. արտաքուստ, հոտնկայս, նախապես, հիմնովին *(մակբայ)*

69 **Ո՞ր նախադասություններում ուղիղ խնդիր կա:**

1. Վերջին մշուշն էլ կանցնի շուտով, Կփռվի լույսը խոր ձորերին:
2. Դու անհոգ նայեցիր ինձ վրա Ու անցար քո խաղով կանացի:
3. Լույսի խտուտից զարթնած սարերը, Իրար շալակած, սարը բարձրացան:
4. Հովիտներին թողած ամեն տագնապ ու հուշ՝ Տար լեռների հովին կարոտներդ անուշ:
5. Աշխարհում այս աղոտ ես քնքուշ Մի հեքիաթ հյուսեցի քո մասին:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Բաղաձայնով վերջացող բառերը ***ն*** որոշիչ հոդ չեն կարող ստանալ:
2. ***Ս*** կամ ***դ*** հոդ ունեցող գոյականները որոշյալ առման են:
3. Ստացական ***ս, դ*** հոդերը փոխարինում են համապատասխանաբար առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունների սեռական հոլովաձևերին:
4. Ցուցական հոդը կարող է փոխարինել ցուցական ***այս*** կամ ***այդ*** դերանվանը:
5. Հոդ կարող են ստանալ միայն գոյականները և դերանունները:
6. Ստացական ***ս, դ*** հոդեր կարող են ստանալ գոյականի բոլոր հոլովաձևերը: